ՀՀ Արարատի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչատնտեսական մասի համակարգողի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Այգավանի Գ.Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոց», «Դվինի Լ. Ազգալդյանի անվան միջնակարգ դպրոց», «Դիտակի Նվեր Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց», «Արարատ գյուղի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց», «Դալարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿՆԵՐԻ–ի համակարգողների պաշտոնի թափուր տեղերը զբաղեցնելու համար ընդունվում են հայտեր:

1.Հաստատության համակարգողի պաշտոնն զբաղեցնելու համար հայտ ներկայացնելու պարտադիր պայմաններն են՝

1)Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
2) բարձրագույն կրթությունը.

2. Թափուր տեղը համալրելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1) դիմում՝ լիազորված մարմնի ղեկավարի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթը (դիպլոմը).
4) ստաժի վերաբերյալ տեղեկանք՝ աշխատավայրից.
5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնում **2024 թվականի նոյեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 13:00-ը,** բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Հասցե՝ ք. Արտաշատ Օգոստոսի 23/60, հեռ 0235.2-45-11